

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/2

8 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Լուսինե Ղազարյանի 08.09.2014 թ-ի գանգատը:

Քաղաքացի Լուսինե Ղազարյանի գանգատում բերված փաստարկները.

Ըստ գանգատաբերի, հանդիսանում է «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպության աշխատող և մինչև 12.08.2014 թ-ը համատեղությամբ աշխատել է նաև «Դու միայնակ չես» հակակոռուպցիոն իրավապաշտպան հասարակական կազմակերպությունում:

«Դու միայնակ չես» հակակոռուպցիոն իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը լուծարվել է 12.08.2014 թ-ին: Կից ներկայացված է պաշտոնական պարզաբանումը, համաձայն որի սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու դիմումի ձևը և եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկը էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման համակարգում պետք է տեղադրված լինեին օգոստոսի 15-ից, սակայն այն տեղադրվել է օգոստոսի 19-ին:

ՀՀ հարկային ծառայության էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման համակարգում եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկի մատնանշված ժամկետից ուշ հասանելիության պատճառով գործատուն, այն է՝ «Դու միայնակ չես» հակակոռուպցիոն իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը ստիպված է եղել խիստ սեղմ ժամկետներում ներկայացնել հուլիս ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվետվությունը առանց սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու դիմումի ներկայացման, քանի որ 12.08.2014 թ-ին աշխատողներին ազատելու պատճառով սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու դիմումում այլևս աշխատակիցների տվյալները չեն արտաբերվել, ինչի հետևանքով էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման համակարգը վերոնշյալ հարկ վճարող քաղաքացուն ներկայացնում է որպես սոցիալական վճար կատարող նաև մյուս գործատուի, այն է՝ «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպության համար:

«Դու միայնակ չես» հակակոռուպցիոն իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը փոխանցել է նաև օգոստոս ամսվա համար 12.08.2014 թ-ի դրությամբ համապատասխան սոցիալական վճարները: «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպությունը ներկայացրել է գանգատաբերի սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու դիմումը, սակայն տույժերից խուսափելու համար նույնպես ստիպված է եղել հուլիս և օգոստոս ամիսների սոցիալական վճարը փոխանցել համապատասխան հաշվեհամարին:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է վերացնել և ոչ իրավաչափ ճանաչել սոցիալական պարտադիր վճարման համակարգում սույն թվականի հուլիս ու

օգոստոս ամիսների իր սոցիալական պարտադիր վճարող լինելու հանգամանքը, և կատարել համապատասխան հետհաշվարկ ու հետ վճարել սույն թվականի նշված ամիսների կտրվածքով իր կողմից կատարված սոցիալական վճարները:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկվող դեպքում գանգատաբերը հայտնում է, որ սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու մասին դիմումների վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային ձևը հարկային մարմնի www.taxservice.am կայքէջին կից գործող <https://file-online.taxservice.am> հաշվետվությունների էլեկտրոնային համակարգում տեղադրվել է 19.08.2014թ., ապա այն գործատուի կողմից ներկայացվել է 2014թ. հուլիս ամսվա հաշվարկը ներկայացնելուց հետո, որի հետևանքով հուլիս և օգոստոս ամիսների համար (այդ թվում նաև համատեղության գործատուի կողմից) իրենից պահվել և փոխանցվել է սոցիալական վճարի գումար:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վարձու աշխատողը իրավունք ունի օրենքը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2017թ. հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար հրաժարվելու սոցիալական վճար կատարելու պարտականությունից, եթե մինչև 2014թ. դեկտեմբերի 25-ը հարկային մարմնին գործատուի միջոցով ներկայացնի համապատասխան դիմում: Ընդ որում՝ վարձու աշխատողը սոցիալական վճար կատարելը դադարեցնում է համապատասխան դիմումը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն սոցիալական վճարներ կատարելուց չեն կարող հրաժարվել 1974թ. հունվարի 1-ից հետո ծնված՝ «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հանրային ծառայողները, պետական կառավարչական հիմնարկների և համայնքային կառավարչական հիմնարկների, դրանց կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Կենտրոնական բանկի, պետական ոչ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վարձու աշխատողները:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 31.07.2014թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ N 826-Ն որոշման 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝

1) եթե «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դիմումը ներկայացվում է (դիմումը մուտքագրվում է տեղեկատվական համակարգ) 2014թ. հուլիս և (կամ) օգոստոս ամիսներին (բայց ոչ ավելի ուշ, քան հուլիս ամսվա անձնավորված հաշվարկը ներկայացնելը), ապա վարձու աշխատողն ազատվում է նաև 2014թ. հուլիս և օգոստոս ամիսների աշխատավարձից սոցիալական վճար կատարելու պարտականությունից.

2) եթե «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դիմումը ներկայացվում է (դիմումը մուտքագրվում է տեղեկատվական

համակարգ) 2014թ. հուլիս ամսվա անձնավորված հաշվարկը ներկայացնելուց հետո, ապա վարձու աշխատողն ազատվում է սոցիալական վճար կատարելու պարտականությունից՝ սկսած հաջորդ ամսվա 1-ից:

Եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկի ձևը, ինչպես նաև սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու մասին դիմումների վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային ձևը տեղադրվել է հարկային մարմնի www.taxservice.am կայքէջին կից գործող <https://file-online.taxservice.am> հաշվետվությունների էլեկտրոնային համակարգում՝ համապատասխանաբար 109-րդ և 114-րդ տողերում՝ 19.08.2014թ. միաժամանակ, որը հաշվի առնելով գործատուները հնարավորություն ունենին սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու մասին դիմումների վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային ձևը հարկային մարմին ներկայացնել մինչև հուլիս ամսվա հաշվարկի ներկայացնելը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Քաղաքացի Լուսինե Ղազարյանի 08.09.2014 թ-ի գանգատը մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝



